

ՍԵԹԵԱՆԻ ԳՈՐԾԸ

(Ամփոփում Պ. ՎԱՀԱՆ ԹԷՔԷՆԱՆԻ ճառին)

Ասուլիսէ մը աւելի յորելեան մըն է այսօրուանը,– Յորելեանը մեր միջավայրին մէջ անծանօթ մնացած գրողի մը որ իր վերջին տասնըեօթը տարիները Եգիպտոսի մէջ անցուցած ըլլալուն հակառակ, Պոլիսէն էր, եւ հոն ալ, Եգիպտոսի մէջ, յաճախ երազեց Պոլիսը:

Այսօր հաւաքուեր ենք իր գովասանքին համար: Թէեւ, տիկիներ եւ պարոններ, ոմանք քննադատելի կը գտնեն երբ հոս կը խմբուինք այս կամ այն գրողը դրուատելու համար, բայց ինչո՞ւ հայ գրողն ալ չունենայ իր գնահատութեան իրաւունքը, ինչո՞ւ նոյն գնահատութիւնը զլացուի մանաւանդ յորելեարի մը հանդէպ:

Ասուլիսը որ այսօր կը նուիրուի իրեն՝ տժգոյն արձագանգ մըն է իր յորելեանին, սակայն իր այս համեստութեան մէջ իսկ որքա՞ն հաճելի է իրեն համար այդ արձագանգը որ իր սիրելի Պոլիսէն կուգայ:

Գնահատութեան եւ գովասանքի այն խօսքերը զոր այսօր կը նուիրենք Սեթեանի, թերեւս չպիտի ներեն անոնք որ գրականութեան մէջ նիւթը կը փնտռեն ամէն բանէ առաջ: Արդարեւ Սեթեան, ինչպէս շատ մը ճշմարիտ արուեստագէտներ, ժողովրդի մը օգտակար հանդիսանալու ձգտումն ու մտահոգութիւնը չունին, երբ բանաստեղծութիւն կը գրեն: Բայց այդ ոեւէ բան կը պակսեցնէ՞ արդեօք տաղանդէն, ինչ որ ձգտեցան ոմանք յայտարարել այս բեմէն իսկ, քերթուածներու մէջ իսկ օգուտը փնտռելով: Ո՛չ, տիկիներ եւ պարոններ: Արձանագործը չենք մեղադրեր, երբ փոխանակ քարին՝ կաւի վրայ կը ցոլացնէ իր հանճարը, բայց կը մեղադրենք, երբ ոսկիի վրայ տգեղ գործ մը կ'արտադրէ: Նոյնն է գրականութեան համար, ուր գեղեցկութեան մտահոգութիւնն է որ պէտք է տիրապետէ: Ինչո՞ւ մեղադրել բանաստեղծը, երբ վարդն ու սոխակը